ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐՅԱԼԸ. ԲԱԳՐԱՏ ԱՐՔ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Պարգև Բարսեղյան

Հայոց եկեղեցու պատմության բուռն և դրամատիկ իրադարձություններով լեցուն ժամանակահատվածներից է 20-րդ դարի առաջին կեսը, որը հատկապես նշանավորվեց նաև ականավոր և ազդեցիկ հոգևորականների գործունեությամբ: Այդ շարքում առանձնանում է Բագրատ արք. Վարդազարյանը, որի կյանքն ու գործունեությունը լի է հայրենանվեր, հիշարժան, կարևոր իրադարձություններով: Նա ապրեց և գործեց հայ ժողովրդի համար ճակատագրական և ողբերգական ժամանակաշրջանում՝ ականատեսն ու մասնակիցը դառնալով հայոց մեծագույն ողբերգության՝ Մեծ եղեռնի, տեսավ հայոց անկախության վերականգնումը, Հայաստանի խորհրդայնացումը, նոր իշխանությունների եկեղեցահալած կեցվածքն ու գործունեությունը, պայքարեց հանուն եկեղեցու և ազգային արժեքների՝ դառնալով ստալինյան ռեժիմի հալածյալն ու զոհը: Լինելով ժամանակի կրթված և զարգացած հոգևորականներից՝ Բագրատ արք. ակտիվ և բեղուն գործունեություն է ծավալել հայոց եկեղեցական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, եղել է թեմակալ առաջնորդ, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ, Մայր Աթոռի դիվանապետ, տարբեր տարիների՝ Սինոդի անդամ և նախագահ, Մեծ Եղեռնի տարիներին Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի նախագահ, անդամ, Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և այլն: Միաժամանակ զբաղվել է բառարանագրությամբ, կազմել անգլերենի բառարաններ:

Բագրատ արք. Վարդազարյանի կենսագրական տվյալները շատ քիչ բան են հաղորդում նրա մանկության և պատանեկության տարիների վերաբերյալ: Ծնվել է 1869 թ. Վլադիկավկազում: 1892 թ. ավարտել է Գևորգյան ճեմարանը և մեկ տարի անց ձեռնադրվել սարկավագ: Այդ ընթացքում եղել է հայրենի քաղաքի եկեղեցական-ծխական դպրոցի ուսուցիչ: 1893 թ. ընտրվել է Մայր Աթոռի միաբան, կարգվել Կենտրոնական ուսումնարանական հանձնաժողովի քարտուղար և այդ պաշտոնը վարել մինչև 1895 թ.: 1896 թ. Բագրատ արք. ձեռնադրվել է աբեղա և 1897 թ.

ծառայության կանչվել Աստրախանի թեմում, որտեղ դասավանդել է ծխական դպրոցում, այնուհետև նշանակվել է Հյուսիսային Կովկասում Հայոց եկեղեցու գործակալությունների վերատեսուչ և միևնույն ժամանակ քարոզիչ: Նույն տարում մեկնել է Մոսկվա և մինչև 1900 թ. եղել Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժնի ազատ ունկնդիր: 1899 թ. ընտրվել է նույն համալսարանին կից հիմնված Բնագիտական, մարդաբանական և ազգագրական Կայսերական ընկերության աշխատակից անդամ: Այդ տարում էլ ստացել է վարդապետական կոչում:

1901 թ. հայոց Մկրտիչ Ա Խրիմյան կաթողիկոսի կարգադրությամբ Բագրատ վրդ. Մոսկվայից մեկնել է Նոր Ջուղա՝ Գևորգ-Քանանյան դպրոցը հիմնելու համար և միաժամանակ նշանակվել Իրանա-Հնդկաստանի թեմի ընդհանուր փոխանորդ, իսկ 1902 թ. թեմի դպրոցների թեմական տեսուչ[1]: Իրանա-Հնդկաստանի թեմում Բագրատ վրդ. Վարդազարյանի գործունեությունը բավականին բեղուն է ստացվում: Նա հանդես է գալիս հոգևոր-մշակութային և կրթական ամենատարբեր ձեռնարկումներով, զարգացնում թեմական, աշխուժացնում՝ վանական կյանքը: 1904-1905 թթ. նրա անմիջական ջանքերով դպրոցներ են հիմնվում Չհարմահալ գավառի 4 հայկական գյուղերում, որոնց համար նաև ուսուցիչներ է հրավիրում Համադանից: Բագրատ վրդ. Վարդազարյանի արժանահիշատակ գործերից է Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանում «Նոր Ջուղայի լրաբեր» պարբերականի խմբագրումը և հրատարակությունը 1904-1908 թթ. (ընդհանուր թվով լույս է տեսել 45 համար), որի համար նրան համարել են Նոր Ջուղայի երկրորդ Խաչատուր վրդ. Կեսարացի: 1907 թ. Բագրատ վրդ. ջանքերով և նախաձեռնությամբ Ս. Կատարինյան մենաստանում կառուցվում է երկհարկանի շենք՝ որպես որբանոց-արհեստանոց, ինչպես նաև կառուցվում են մի քանի սենյակներ, որոնք օգտագործվում են որպես գորգագործարան:

1910 թ. Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը Բագրատ վարդապետին կանչում է Էջմիածին՝ ծառայության: Կաթողիկոսին չեն

---

[1] Տե՛ս **Արարատ, օ**գոստոս-սեպտեմբեր, 1913 թ., էջ 854: Հմմտ.՝ **Արմենակ Մանուկյան,** Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, «Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները», 1930-1938 թթ., Երևան, 1997 թ., էջ 50-51, **Ստեփան Կերտող,** Գիրք տառապելոց, 1920-1950-ական թվականների բռնությունների զոհ հայ հոգևորականներ, Երևան, 2002, էջ 282-283:

համոզում Նոր Ջուղայի թեմի թախանձագին խնդրանքները՝ Բագրատ վրդ. վերադարձնելու թեմ, քանի որ անխոնջ այս մշակի աշխատանքը Մայր Աթոռում, ինչպես ցույց տվեց հետագա կյանքը, շատ ավելի կարևոր էր: Նույն թվականի փետրվարի 23-ին Կաթողիկոսական կոնդակով Բագրատ վրդ. նշանակվում է Մայր Աթոռի դիվանապետ (Գևորգ Ե-ի կոնդակով՝ 1912 թ.):

Նույն թվականին կաթողիկոսի մեկ այլ կոնդակով Բագրատ վրդ. Վարդազարյանը նշանակվում է նաև Գևորգյան հոգևոր ճեմարանի ժամանակավոր տեսուչ: Բագրատ վարդապետին անմիջապես հանձնարարվում է «... Էջմիածին հրաւիրել Ճեմարանի ուսուցիչներին՝ օգոստոսի 25-ին նորեկ աշակերտացուների և վերաքննութիւն ունեցող սաների հարցաքննութիւնն եւ ապա դասաւանդութիւնը սկսելու համար. խիստ հսկողութիւն ունենալ Ճեմարանի սաների կարգապահութեան, ուսումնական եւ տնտեսական խնդիրների վրայ»[1]: Բագրատ վրդ. Վարդազարյանը, լինելով ժամանակի առաջադեմ հոգևորականներից մեկը, միաժամանակ համատեղում է տեսչի և դիվանապետի պաշտոնները: Նա ակտիվորեն մասնակցում էր ներեկեղեցական և համազգային կյանքին, ոչ միայն զբաղվում էր միայն ճեմարանին վերաբերող գործերով, կրթական համակարգի բարեփոխմամբ և զարգացմամբ, այլև ակտիվ մասնակցություն ուներ եկեղեցական կյանքի տարբեր իրադարձություններին:

Բագրատ վրդ. Վարդազարյանը եռանդուն և գործնական քայլեր է ձեռնարկում ճեմարանում բարեփոխումներ անցկացնելու, կրթական ծրագրերի զարգացման և ճեմարանի հեղինակության և կարգավիճակի բարձրացման ուղղությամբ: Ճեմարանի ապագայի Բագրատ եպս. (եպիսկոպոս է ձեռնադրվել 1913 թ. օգոստոսի 25-ին) տեսլականը հստակ ուրվագծվում է 1913 թ. Մայր Աթոռում Հայ գրերի գյուտի և տպագրության մեծ հոբելյանի տոնակատարության ժամանակ հնչեցված բավականին ծավալուն ելույթում, որում նա մասնավորապես կենտրոնանում է Ճեմարանի «...լսարանական-մասնագիտական բաժնի առանձնացնելու և ըստ ամենայնի իր կոչման բարձրութեանը հասցնելու վրայ»: Ըստ նրա «... ճեմարանի լսարանական բաժինը պէտք է դարձնել մի, եթէ կարելի է ասել, հայագիտական համալսարան, որտեղից աւարտող հայագէտները կարողանան պաշտպանել ու զարկ տալ բուն ազգային-հայկական կուլ-

[1] **Արարատ**, սեպտեմբեր, 1912, էջ 793:

տուրային երկրի զանազան մասերում»[1]: Հենց այս նպատակներն իրագործելու համար էլ 1912 թ. լինում է Մոսկվայում, հանգանակություն հավաքում Ճեմարանին կից բնական գիտությունների բաժանմունք կառուցելու համար և մոսկվաբնակ Թորոսյան եղբայրների նվիրատվությամբ, Մայր Աթոռ վերադառնալուց հետո, ձեռնամուխ լինում բնագիտական կաբինետի կամ բաժանմունքի կառուցմանը: Նմանատիպ մեկ այլ կարևոր ձեռնարկ էր Ճեմարանի Մանկավարժական թանգարանի կառուցումը (շինարարությունն ավարտվում է, երբ Բագրատ եպս. այլևս տեսուչ չէր), որը ևս պետք է կարևոր դերակատարություն ունենար Ճեմարանի զարգացման համար:

Բագրատ արք. տեսչական գործունեության ուշագրավ դրվագներից է 1913 թ. Գևորգյան ճեմարանում բարձրացած բողոքի մեծ ալիքը և կազմակերպված դասադուլը, որի ժամանակ ուսանողության և ուսուցչական խմբի անդամների բազմազան պահանջների թվում էր նաև ինչ-ինչ պատճառներով Բագրատ եպս. հրաժարականը: Սակայն կաթողիկոսի անմիջական միջամտությամբ և Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի ջանքերով ճեմարանը խաղաղվում է, իսկ Բագրատ եպս. մնում իր պաշտոնին[2]: Այնուամենայնիվ պետք է փաստենք, որ լինելով նաև Մայր Աթոռի դիվանապետ, բազմազբաղ և գործունյա հոգևորականը ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել նաև ազգային-եկեղեցական կյանքին ընդհանրապես, ինչի արդյունքում որոշակիորեն տուժել է տեսչի պաշտոնը: Բագրատ եպս. ամենաակտիվ դերակատարներից էր թե՛ հոգևոր ծառայության ասպարեզում, թե՛ պետություն-եկեղեցի հարաբերություններում: Միայն մի քանի փաստերի արձանագրումը արդեն ի հայտ է բերում նրա բազմազբաղությունը և գործունեության բազմազանությունը: Մասնավորապես 1914 թ. «Դաշնակցություն» կուսակցության գործով կալանավորվածների ազատման հարցով հանդիպում է Կովկասի փոխարքայի՝ Ի. Վորոնցով-Դաշկովի հետ[3] և Կաթողիկոսին փոխանցում փո-

---

[1] **Արարատ**, հոկտեմբեր, 1913, Հավելված, էջ 15:

[2] **Խորեն Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.) / Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, կազմող՝ Ս. Ա. Բեհբության, Երևան, 1996, էջ 291-292:

[3] **Ստեփան Կերտող,** Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, 2003, էջ 72:

խարքայի առաջարկը՝ դիմել իրեն, մեկ այլ դեպքում կատարում է ձեռնադրություններ, կամ կատարում Օշականի Նոր դպրոցի հիմքի օրհնությունը և այլն:

Միաժամանակ պետք է նշել, որ Բագրատ եպս. այդ ժամանակաշրջանի ոչ տեսչական գործունեությունը եղել է երբեմն պարտադրված, քանի որ սկսվել էր հայ ժողովրդի պատմության դաժանագույն ժամանակաշրջանը և մեծ արհավիրքը առաջնային էր դարձրել մարդկային կյանքերի փրկությունը, կարիքավորներին օգնություն տրամադրելը, պայքարը սովի, համաճարակի դեմ և այլն:

1914 թ. դեկտեմբերի 28-ին ստեղծվում է «Եղբայրական օգնության Ս. Էջմիածնի գլխավոր կարգադիր հանձնաժողովը»[1], որի հիմնական նպատակն էր միավորել եղբայրական օգնություն ցուցաբերող բոլոր կազմակերպությունների և ժողովների գործունեությունը, կազմակերպել առաջին անհրաժեշտության օգնություն, նյութական աջակցում և բժշկական օգնություն, խնամք գաղթականներին և եղեռնից տուժածներին[2]: Այս կարևոր և հետագայում իրոք ամենաակտիվ դերակատարություն ստանձնած հանձնաժողովի անդամ և նախագահող է նշանակվում Բագրատ եպիսկոպոսը: Նա մեծ ակտիվություն է ցուցաբերում հայ գաղթականությանը օգնություն տրամադրելու, դրամական և այլ միջոցների հավաքագրման և բաշխման գործում:

1914 թ. Բագրատ եպս. ի թիվս այլ հոգևորականների, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Մայր Աթոռի թանկարժեք իրերի Մոսկվա տեղափոխության հարցում՝ լինելով այդ գործի կազմակերպիչներից մեկը[3]: Այդ ժամանակահատվածում Բագրատ եպս. ակտիվորեն մասնակցում է նաև հայ կամավորական ջոկատների կազմմանը, ֆինանսավորմանը և ռազմական ու տնտեսական գույքի ապահովմանը[4]:

1914 թ. վերջերին Գևորգ Ե կաթողիկոսը Երևանի փոխթեմակալ Խորեն եպս. Մուրադբեկյանի գործունեության հետ կապված որոշ խնդիրների պատճառով մտադրվում է Բագրատ եպս. նշանակել Երևանի փոխ-

---

[1] **Նույն տեղում,** էջ 133-135:

[2] **Արարատ,** հունվար, 1915 թ. էջ 4-5, 17:

[3] **Ստեփան Կերտող,** Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 95-97, 99:

[4] **Նույն տեղում**, էջ 186-187:

թեմակալ, սակայն հետագայում, Խորեն եպս. հասցեին հնչած մեղադրանքներին չհավատալով, Հայրապետը միտքը փոխում է և պաշտոնանկ չի անում նրան[1]:

1915 թ. սեպտեմբերի 17-ին իր դիմումի համաձայն Բագրատ եպս. ազատվում է Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի նախագահի պաշտոնից և անդամակցությունից, որից հետո այդ պաշտոնին է նշանակվում հայ ժողովրդի մեծագույն զավակ և Հայոց եկեղեցու մեկ այլ երախտավոր՝ Գարեգին վրդ. Հովսեփյանը[2]: Նույն թվականի հոկտեմբերի 19-ին Բագրատ եպս. ազատվում է նաև դիվանապետի պաշտոնից:

1916 թ. Բագրատ եպիսկոպոսի համար սկսվում է գործունեության նոր շրջափուլ: Նախ իր դիմումի համաձայն նա ազատվում է Գևորգյան ճեմարանի տեսչի պաշտոնից և նրան հաջորդում է մեծանուն հայագետ Ս. Մալխասյանը: Միևնույն կոնդակով Բագրատ եպս. հանձնարարվում է հսկողության տակ առնել և ավարտին հասցնել մանկավարժական թանգարանի և բնական գիտությունների շենքի շինարարությունը, որոնք պետք է հանձնվեին ճեմարանի վարչությանը: Միաժամանակ Բագրատ եպս.Վարդազարյանը շարունակում է ակտիվ մասնակցություն ունենալ եկեղեցի-պետություն հարաբերություններում և նույն թվականին Գարեգին ծ. վրդ. Հովսեփյանի հետ նշանակվում է հայ հոգևորականության ներկայացուցիչ՝ Կովկասում «Զեմստվո» մտցնելու խորհրդակցություններին մասնակցելու համար, և ապրիլի 21-ին երկուսով մեկնում են իրենց առաքելությամբ, իսկ մայիսի 15-ին վերադառնում և ներկայացնում ընդարձակ զեկուցագիր[3]:

Հասարակական-քաղաքական այս ակտիվությունը Բագրատ եպս. ցուցաբերում է նաև 1916 թ. Շամախիի թեմի առաջնորդ[4] դառնալուց հետո ևս: Մասնավորապես 1916 թ. մարտին Կաթողիկոսական կոնդակով նշանակվել է Զանգու առվի շինարարության հանձնաժողովի նախագահ[5], Շամախիի թեմական գործերին զուգահեռ 1917 թ. մարտին մաս-

---

[1] **Նույն տեղում**, էջ 127:

[2] **Արարատ,** սեպտեմբեր-հոկտեմբեր, 1915, էջ 709:

[3] **Արարատ,** մայիս-հունիս, 1916 թ. էջ 222, 337:

[4] **Նույն տեղում**, էջ 334:

[5] **Արարատ,** ապրիլ-մայիս, 1917 թ, էջ 279:

նակցել է Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսական եկեղեցուց անջատված Վրաց ուղղափառ եկեղեցու նորընտիր կաթողիկոս-պատրիարք Կյուրիոնի օծմանը[1], այնուհետև Տ. Մխիթար եպս. և Սինոդի անդամ Տ. Գևորգ վրդ. հետ ուղարկվել Թիֆլիս՝ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության կողմից Կովկաս ուղարկած ներկայացուցիչներին շնորհավորելու[2]: Նույն թվականի սեպտեմբերի 29-ին մասնակցում է Թիֆլիսում բացված Հայկական ազգային համախորհրդակցությանը՝ որպես Հայոց եկեղեցու ներկայացուցիչ[3]:

Բագրատ եպս. Վարդազարյանի թեմակալական գործունեությունը Շամախիի թեմում ուղեկցվեց 1918 թ. Բաքվի, Շամախիի, Գանձակի և հարակից բնակավայրերի հայ բնակչությանը պատուհասած ողբերգությամբ, երբ թուրք-թաթարական կանոնավոր զորամիավորումներն ու թաթարական խաժամուժը կազմակերպեցին հայերի զանգվածային ջարդեր: Լինելով դեպքերի ու իրադարձությունների անմիջական մասնակիցն ու ականատեսը՝ Բագրատ եպիսկոպոսի կողմից հայերի և մասամբ նաև մալականների նկատմամբ թուրքերի և ադրբեջանցիների գործած վայրագությունների նկարագրությունները Մայր Աթոռի հետ պաշտոնական գրագրության մեջ անփոխարինելի սկզբնաղբյուր են վերոհիշյալ դեպքերի ու իրադարձությունների ուսումնասիրության և գնահատման հարցում[4]: Դեռևս 1917 թ.-ից, Բագրատ եպս. Գևորգ Ե Կաթողիկոսին զգուշացրել է, որ թուրքերը վերստին նախապատրաստվում են պատերազմի կամ գոնե կոտորածի: 1918 թ. դեկտեմբերի 14-ի նամակով Բագրատ եպս. հայտնում է. «Ինչպէս Կովկասի միւս մասերում, այնպէս և այս շրջանում չափազանց եռանդուն գործում էին տաճկական զինուորականները (մեծ մասամբ գերությունից փախած) և էմիսարները, որոնք կազմակերպում էին տեղական թուրքական ոյժերը, զինում, վարժեցնում,

---

[1] **Ստեփան Կերտող**, Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 83:

[2] **Արարատ,** ապրիլ-մայիս, 1917 թ, էջ 281:

[3] **Ստեփան Կերտող**, Հայ Առաքելական Եկեղեցին Առաջին աշխարհամարտի տարիներին, էջ 237-238:

[4] **Մայր Աթոռ ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին** (1918-1920 թթ) / Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Ե, , կազմեց Ս. Բեհբության, Երևան, 1999, էջ 86-89:

զինապահեստների վրայ յարձակւում, ռուս և հայ զիուորներին զինաթափ անում, կողոպտում, ճանապարհները կապում և այլն»[1]:

Հայկական ջարդերին հաջորդած շրջանում Բագրատ եպս. շարունակում է մնալ իր հոտի կողքին, կազմակերպում է կողոպտված, ավերված և թալանված հայկական բնակավայրերում ջարդերից մազապուրծ բնակչության վերաբնակեցման հարցերը, օգնության տրամադրումը, թեմի կենտրոնը Շամախիից տեղափոխում է Բաքու և Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին դարձնում առաջնորդանիստ, Բաքվի անգլիական հրամանատարության կարգադրությամբ կազմում թուրքական հրոսակների թալանած եկեղեցական իրերի, առարկաների, սպասքի և հարստությունների մանրամասն ցուցակ:

Փաստացի Բագրատ եպս. Վարդազարյանի Բաքու-շամախիյան թեմական առաջնորդական գործունեությունը եղավ մեծ փորձություն:

1920 թ. փետրվարի 14-ին Բագրատ եպս. նշանակվում է Սինոդի անդամ, իսկ 1921 թ., ազատվելով Բաքվի թեմի առաջնորդի պաշտոնից, տեղափոխվում է Էջմիածին և նշանակվում Սինոդի նախագահ[2]:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայոց եկեղեցուն նորանոր փորձություններ էին սպասվում, նոր իշխանությունների կրոնահալած քաղաքականությունը մեծ վնաս էր հասցնում եկեղեցական բնականոն կյանքին, սահմանափակում եկեղեցու և նրա սպասավորների իրավունքները, եկեղեցուն զրկում ունեցվածքից և գործունեության ասպարեզից, փակվում կամ հիմնահատակ ավերվում էին բազմաթիվ եկեղեցիներ, բռնագրավվում էր հայոց եկեղեցական սպասքն ու գույքը, ստեղծվում էին հակաեկեղեցական տարատեսակ կազմակերպություններ ու խմբեր, որոնց գործունեությունը միտված էր եկեղեցու վերացմանը:

Ահա այսպիսի պայմաններում Բագրատ եպս. ստանձնում է Մայր Աթոռի դիվանապետի և վանական կառավարության նախագահի պաշտոնը: Խորհրդային առաջին տարիներին պետության եկեղեցահալած քաղաքականությունը հանգեցնում է նրան, որ շատ հոգևորականներ կամավոր հրաժարվում են հոգևոր ծառայութունից, որոշ մասը դուրս են գալիս եկեղեցուց և ստեղծում այսպես կոչված «Ազատ եկեղեցական եղ-

---

[1] **Մայր Աթոռ ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին** (1918-1920 թթ), էջ 8:

[2] **Նույն տեղում**, էջ 289:

բայրությունը», որը վարում էր հակաեկեղեցական գործունեություն: Այդ պայմաններում անհրաժեշտ էր եկեղեցու ներքին կառուցվածքն անսասան պահելու և հեղինակությունը վերականգնելու համար կտրուկ և երբեմն ծայրահեղ միջոցներ ձեռնարկել, որոնք, եկեղեցու սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին զուգադրվելով, հանգեցնում են 1923 թ. Մայր Աթոռում բարձրացած դժգոհության մեծ ալիքի՝ ընդդեմ Բագրատ արք. Վարդազարյանի գործունեության, որն այս անգամ ևս հարթվում է Խորեն եպս. միջամտությամբ և որի խորհրդով Բագրատ արք. հրաժարական է տալիս վանական կառավարության նախագահի պաշտոնից[1]:

Սակայն այս դրվագը անշուշտ չի փոխում Բագրատ արք. եկեղեցանպաստ գործունեության ուղղվածությունը և, ի տարբերություն շատ հայտնի և անհայտ հոգևորականների, Մայր Աթոռի նվիրյալը չի հանում փարաջան, չի հրաժարվում իր կոչումից և մինչև կյանքի ողբերգական ավարտը շարունակում է իր անմնացորդ ծառայությունը Մայր եկեղեցուն:

1924-1928 թթ. Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը եղել է Սինոդի լուծարման արդյունքում ստեղծված Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, տարատեսակ հարցերի վերաբերյալ Խորհրդային իշխանությունների հետ բանակցություններում ունեցել է ամենաակտիվ դերակատարություն, Մայր Աթոռը ներկայացրել ամենատարբեր ատյաններում: Այս շրջանի նրա գործունեությունը չենք կարող անվանել հակախորհրդային, սակայն նա անընդհատ, տարբեր ատյաններից և ամբիոններից բողոքել է խորհրդային իշխանությունների դեմ, դժգոհել եկեղեցու նկատմամբ տարվող քաղաքականությունից, որի պատճառով 1923-1924 թթ. խորհրդային գաղտնի գործակալական ամբաստանագրերում, ի թիվս այնպիսի հայտնի հոգևորականների, ինչպիսիք էին Ներսես Մելիք-Թանգյանը, Գարեգին եպս. Հովսեփյանը, Մեսրոպ եպս. և այլն,[2] ներկայացվում է իբրև հակախորհրդային քարոզչություն իրականացնող, ռեակցիոն, ազգայնական, «սև հոգևորականության կոնսերվատորական թևի ներկայացուցիչ» և այլն:

---

[1] **Խորեն Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), էջ 292:

[2] **Արտակ եպիսկոպոս Սմբատեանց** / Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, Գիրք Գ, Երևան, 1997, էջ 201-204:

Մասնավորապես 1922 թ. հունիսի 7-ի գրությամբ Բագրատ արք. իր վրդովմունքն է հայտնում Խորհրդային Հայաստանի կառավարության և լուսժողկոմ Պ. Մակինցյանի բռնի արարքների դեմ, հատկապես Էջմիածնի տպարանը փակելու կապակցությամբ[1]: Մեկ այլ նամակում արտահայտվում է նրա անհանդուրժողական վերաբերմունքը Մայր Աթոռի ոտնձգությունների նկատմամբ և դատապարտում անարդարությունն ու բռնությունը: Պ. Մակինցյանի գործունեությունը նա բնութագրում է «...գռեհիկ դիրք» ու Էջմիածնի դեմ ծայրահեղորեն թշնամի, իրավացիորեն նշելով, որ «Բռնապետությունը աջից լինի թե ձախից, ատելի է Էջմիածնի համար»[2]: 1925 թ. Մոսկվայում կառավարության անդամների հետ վարում է բանակցություններ Հայոց եկեղեցու ապագայի, կարգավիճակի, իրավունքների և այլնի վերաբերյալ, որոնց ընթացքում հանդիպում է ԱՍԴՀ ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին, Անդրգործկոմի տնտեսական-իրավական մասի վարիչ Ա. Սաբանինին և այլոց[3]: Լինելով Հայ եկեղեցու նվիրյալներից՝ Խորեն արքեպիսկոպոսի հետ միասին Բագրատ արք. 1926 թ. վճռականորեն հանդես է գալիս Ս. Սարգիս եկեղեցու գավթում հանգուցյալ կարգալույծ Աշոտ եպիսկոպոսի «Ազատ եկեղեցական եղբայրության» կազմակերպած թաղումը արգելելու օգտին, և նրանց ակտիվ միջամտությամբ այդ թաղումը արգելվում է, իսկ արդեն փորված գերեզմանը լցվում[4]: 1927 թ. մեկ այլ գրությամբ էլ տեղեկանում ենք, որ իշխանությունները թույլ չեն տալիս Ս. Ծննդյան և Մկրտության տոնը կատարելու, սակայն, Բագրատ արք., պայքարելով, այնուամենայնիվ կատարում է տոնակատարությունը[5]:

Միաժամանակ Բագրատ արքեպիսկոպոսը շարունակում է ակտիվորեն մասնակցել եկեղեցու ներքին կյանքին առնչվող կարևորագույն հարցերի քննարկմանը: 1925-1926 թթ. մասնակցում է տոմարական փոփոխությունների վերաբերյալ խորհրդակցություններին, զբաղվում տոմարական խնդիրներով, լինում Նոր Նախիջևանում, Մոսկվայում, Արմավի-

---

[1] **Խորեն Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), էջ 150-151:

[2] **Նույն տեղում,** էջ 150-151:

[3] **Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության,** (1921-1938 թթ.), էջ 75-77:

[4] **Խորեն Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), էջ 212-213:

[5] **Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության**, (1921-1938 թթ.), էջ 92-93:

րում, Թիֆլիսում[1]: 1927 թ. Բարգրատ արք. նշանակվում է Վրաստանի թեմում կաթողիկոսի ներկայացուցիչ, Վրաստանի թեմական խորհրդի նախագահ և մինչև նոր թեմակալ առաջնորդի ընտրության կազմակերպումը՝ թեմակալ առաջնորդ, սակայն իշխանությունների հետ տարաձայնությունները, հակաեկեղեցական քաղաքականությունը և «Ազատ եկեղեցական եղբայրությանը» արտոնություններ տալը բերում են նրան, որ Անդրկովկասյան պետական քաղաքական վարչությունը արգելում է նրան գտնվել Թիֆլիսում և պահանջում է վերադառնալ Հայաստան[2], և չնայած կաթողիկոսի հետագա դիմումներին՝ նրան այլև թույլ չեն տալիս վերադառնալ Վրաստան:

1928-1932 թթ. Բագրատ արք. Վարդազարյանը եղել է Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ[3]: Այստեղ ևս Բագրատ արք. հանդիպում է նույն եկեղեցահալած քաղաքականությանը, փակվում են եկեղեցիներ, օտարվում է եկեղեցու գույքը, եկեղեցու վրա ծանր հարկեր են դրվում պետականորեն[4]:

1931 թ. ծանր հիվանդության պատճառով Բագրատ արք. Վարդազարյանը հրաժարվում է թեմի առաջնորդական պաշտոնից, Գերագույն հոգևոր խորհորդը ընդունում է նրա հրաժարականը, սակայն իշխանությունները խոչընդոտում են նրա վերադարձը Էջմիածին և միայն Կաթողիկոսի տեղապահ Խորեն արք. Մուրադբեկյանի խնդրագրերից հետո է հնարավոր դառնում նրա վերադարձը[5]:

1932 թ. մինչև կյանքի վերջը Բագրատ արք. Էջմիածնում է, միաբանների շարքում: Նույն թվականին նա մասնակցում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններին, սկզբնական շրջանում նաև թեկնածուների ցուցակում է, սակայն հետագայում հրաժարական է տալիս[6], իսկ Խորեն Ա Մուրադբեկյանի ընտրությունից հետո հրաժարվում է նաև Գե-

---

[1] **Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), էջ 192:

[2] **Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության**, (1921-1938 թթ.), էջ 105-107, էջ 136-137:

[3] **Արմենակ Մանուկյան,** Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, «Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները», 1930-1938 թթ., էջ 51:

[4] **Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության**, (1921-1938 թթ.), էջ 185-186, 213-214:

[5] **Նույն տեղում,** էջ 339-340:

[6] **Խորեն Ա Մուրադբեկյան, Կաթողիկոս Ամենայն Հայոց** (Հոգևոր գործունեությունը 1901-1938 թթ.), էջ 335;

րագույն հոգևոր խորհրդի անդամությունից:

1930-ական թվականներին Մայր Աթոռում մնացած և եկեղեցուն նվիրված այն փոքրաթիվ հոգևորականներից է, որը երբեք չհրաժարվեց իր կոչումից և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց Մայր եկեղեցուն:

1938թ. փետրվարին Բագրատ արք. Վարդազարյանը ձերբակալվում է և ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակի 1938 թ. փետրվարի 28-ի որոշմամբ գնդակահարվում, իսկ 1958 թ.՝ արդարացվում: Ըստ մեղադրանքի Բագրատ արք. Վարդազարյանը «... լինելով հ/ս տրամադրված տարր, պտտվում էր Էջմիածնի վանքի հոգևորականների շրջանակներում, պարբերաբար վարում էր հ/խ ագիտացիա և ուներ հ/հ արտահայտություններ հասցեագրված կուսակցությանը և կառավարությանը»[1]:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐՅԱԼԸ. ԲԱԳՐԱՏ ԱՐՔ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Պարգև Բարսեղյան

Բանալի բառեր. *Հայոց եկեղեցի, 20-րդ դար, Բագրատ արք. Վարդազարյան, Գևորգյան ճեմարան, պատերազմ, հայկական ջարդեր, Բաքվի ջարդեր, խորհրդային իշխանություն, ռեպրեսիաներ:*

20-րդ դարի առաջին կեսը Հայոց եկեղեցու պատմության իրադարձություններով հարուստ շրջաններից մեկն է: Այս շրջանում գործող հայրենասեր և եկեղեցու նվիրյալ հոգևորականների շարքում առանձանում է Բագրատ արք. Վարդազարյանը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել ժամանակի քաղաքական, հասարակական և ազգային-եկեղեցական կյանքին, եղել է Իրանա-Հնդկաստանի թեմի ընդհանուր փոխանորդ, Գևորգյան հոգևոր ճեմարանի ժամանակավոր տեսուչ, Եղբայրական օգնության կարգադիր հանձնաժողովի նախագահ, Շամախիի (Բաքվի) թեմի առաջնորդ, Մայր Աթոռի դիվանապետ և վանական կառավարության նախագահ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Հյուսիսային Կովկասի և Աստրախանի թեմի առաջնորդ: Բագրատ արք. ակտիվորեն մասնակցել է մարդասիրական, բարեգործական ծրագրերի, կարգավորել Մեծ Եղեռնի տարիներին եղբայրական օգնություն ցուցաբերող բոլոր կազմակերպությունների և ժողովների գործունեությունը, կազմակերպել առաջին անհրաժեշտության օգնություն, նյութական աջակցում, բժշկական օգնություն և խնամք

---

[1] **Արմենակ Մանուկյան,** Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, «Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները», 1930-1938 թթ., էջ 58:

գաղթականներին: Նա այն բացառիկ հոգևորականներից էր, որ Խորհրդային իշխանությունների կրոնական հալածանքների տարիներին հավատարիմ մնաց եկեղեցուն մինչև կյանքի վերջը և դարձավ ստալինյան բռնաճնշումների զոհ:

ПОЧИТАТЕЛЬ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ: АРХИЕПИСКОП БАГРАТ ВАРДАЗАРЯН

Паргев Барсегян

Ключевые слова: *Армянская церковь, 20-й век, архиепископ Баграт Вардазарян, Семинария Геворгян, война, массовые резни, погромы в Баку, Советская власть, репрессии.*

Первая половина XX века является одним из богатых событиями периодов истории Армянской Церкви. Баграт Архиепископ Вардазарян известен как яркий патриот и преданный священнослужитель того времени. Он принимал активное участие в политической, социальной, национальной и религиозной жизни, был наместником Ирано-Индиской Епархии, временным и. о. инспектора Семинарии Геворгян, председателем Распорядительной комиссии братской помощи, главой Шемахинской (Бакинской) епархии, Правитель канцелярии и председатель монашеской коллегии Первопрестольного Эчмиадзина, Членом Верховного Духовного совета, главой Северокавказской и Астраханской епархии. Архиепископ Баграт принимал активное участие в гуманитарных и благотворительных проектах, в годы Геноцида армян регулировал общую деятельность всех организаций и советов занимающихся братской помощью, организовал необходимую материальную и медицинскую помощь для беженецев. Он был одним из тех уникальных священников, который в годы религиозных гонений со стороны советских властей оставался верен церкви и стал жертвой сталинских репрессий.

THE DEVOTEE OF THE ARMENIAN CHURCH: ARCHBISHOP BAGRAT VARDAZARYAN

Pargev Barseghyan

Key words: *The Armenian Church, The 20th century, Arcbishop Bagrat Vardazaryan, Gevorkyan seminary, war, Armenian massacre, massacres in Baku, Soviet government, repressions.*

The first half of the 20th century is a period in the history of the Armenian church full of various events. Archbishop Bagrat Vardazaryan is one among the patriarchs and devout clergymen of this period. He actively involved in the political,

social and national-ecclesiastical life of the time, he was also the vicar of the Iranian-Indian Diocese, the Temporary Chairman at Gevorgyan Theological Seminary, Chairman of the Disciplinary Commission for the Relief, the Primate of Shamakhi (Baku) Diocese, the Chancellor of the Mother See of Holy Etchmiadzin, a member of the Supreme Spiritual Council, the Primate of the North Caucasus and Astrakhan diocese.

Bagrat Archbishop actively participated in humanitarian, benevolent programs, regulated the activities of all the fraternal aid organizations and meetings during the Genocide, organized first aid, material support, medical care and care for the refugees. He was one of the exceptional clergy who, during the years of religious persecutions of the Soviet authorities, remained loyal to the church until his death and became a victim of Stalin's repressions.